

4.	<b>ՔԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b> <b>PHILOLOGY, PEDAGOGY AND PSYCHOLOGY</b> <b>ФИЛОЛОГИЧЕСКИЕ, ПЕДАГОГИЧЕСКИЕ И ПСИХОЛОГИЧЕСКИЕ НАУКИ</b>
----	--

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՐՍԵՂՅԱՆԸ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՂԱԳՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԵՐԸ**

**ԱՍՈՅԱՆ ԹԱԹՈՒԼ**

*Քանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
քանասիրական ֆակուլտետի դեկան*

**ՆԵՐՍԻՍՅԱՆ ԼԻԼԻԹ**

*Հայոց լեզվի և գրականության բաժնի  
մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի*

Հայ ժամանակակից լեզվաբանության հայտնի դեմքերից մեկը՝ Հովի. Բարսեղյանը, հետևյալ միտքն է արտահայտել ուղղագրության փոփոխությունների վերաբերյալ. «Լեզվի հնչյունային սկզբունքով ձևավորված ուղղագրությունը հետ տանելու փորձերը հակապատմական են, ոչ առաջադիմական: Ուղղագրական միասնության կարելի է հասնել ոչ թե հետընթացով, այլ հին ու նոր ուղղագրությունների մերձեցման, մասնավորապես դեպի առաջ գնացող փոխզիջումների ճանապարհով»<sup>1</sup>: Լեզվաբանի մտահոգությունը պայմանավորված էր ժամանակ առ ժամանակ արևելահայերենի և արևմտահայերենի ուղղագրությունների միավորման շուրջ արտահայտված տեսակետների հակասականությամբ, հաճախ ծայրահեղ մոտեցումներով և քաղաքական ենթատեքստով:

Հայերենի ուղղագրության պատմության լավագույն գիտակ Ս.Գյուլբուրդյանը հետևյալ կերպ է գնահատում գրի նշանակությունը հասարակության կյանքում. «Գիրը բանավոր խոսքի արտահայտությունն է գծային պայմանական նշաններով: Գրի միջոցով հնչյունային խոսքը դառնում է տեսանելի ու տևական, կարողանում է հաղթահարել ժամանակն ու

<sup>1</sup> Բարսեղյան Հովի., Կենսամատենագիտություն, Երևան, 2011, էջ 80:

տարածությունը: Նա ամենաուժեղ լծակն է մարդկային հասարակության հանրակեցության, գիտության ու մշակույթի զարգացման և տարածման»<sup>1</sup>:

Հայ գիրն աշխարհում հնագույններից է, ստեղծվել է Մեսրոպ Մաշտոցի կողմից հինգերորդ դարում: Գրի ստեղծումը մեծ նշանակություն ունեցավ հայ ժողովրդի կյանքում, քանի որ հայ պետականության և ժողովրդի գոյությունը լուրջ վտանգի տակ էր: Առանձնակի կարևոր էր գրի միջոցով քրիստոնեության տարածումը հայերիս մեջ, դրա շնորհիվ հայ ժողովուրդը պահպանեց իր ինքնությունը: Հայոց այբուբենի ստեղծումից հետո զարկ տրվեց ինքնուրույն և թարգմանական գրականության ստեղծմանը:

Թեև այբուբենը ժամանակի ընթացքում հիմնականում փոփոխության չի ենթարկվում կամ քիչ է փոխվում, սակայն արտասանական փոփոխությունները ինքնաբերաբար խնդիրներ են առաջացնում ուղղագրության համար: Բանն այն է, որ տառաստեղծման առաջին շրջանում արտասանությունն ու գրությունը համապատասխանում են միմյանց, սակայն արտասանության փոփոխությունը խզում է առաջացնում այդ համապատասխանության մեջ: Նման դեպքերում կամ պետք է վերականգնել գրության և արտասանության համապատասխանությունը, կամ պահպանել ավանդական բառապատկերները՝ մշակելով համապատասխան ուղղագրական և ուղղախոսական կանոնների համակարգ:

Լեզուն պատմական երևույթ է: Ժամանակի ընթացքում ենթարկվում է փոփոխությունների, որոնք տարբեր ծավալով և արագությամբ ընդգրկում են լեզվական ամբողջ համակարգը, կառուցվածքային բոլոր մակարդակները: Փոփոխություն է կրում նաև լեզվի հնչյունական համակարգը: Այդպիսի օրինակ է հայերենի բաղաձայնական համակարգում տեղի ունեցած տեղաշարժերը: Մեսրոպյան ուղղագրության առաջին փոփոխությունները, ուղղագրական առաջին կանոնակարգումները, կապված վերը նշված հանգամանքների և հայոց այբուբեն մուտք գործած Օ և Ֆ տառերի, կցագիր և-ի հետ, կատարվել են դեռևս 12-րդ դարում: սակայն նոր գրական լեզվի ուղղագրության հարցը լայն քննարկման նյութ է դառնում 19-րդ դարում, ծավալվում են բանավեճեր, առաջանում են ուղղագրական տարբերակներ, առաջարկվում են լուծումներ: Ուղղագրական տարբերակների առաջացման պատճառները օբյեկտիվ էին և սուբյեկտիվ: «Օբյեկտիվ պատճառներից էր հայոց պետականության բացակայությունը և հայերի ցրվածությունը 3 պետություններում (Օսմանյան Թուրքիա, Ռուսաստան, Պարսկաստան) արդեն ձևավորված մի քանի գաղութներում: Սուբյեկտիվ պատճառներից էր այն, որ ազգային գիտակցության վերելքի շնորհիվ լույս են տեսնում

---

<sup>1</sup>Գյուլբուդաղյան Ա., Հայերենի ուղղագրության պատմություն, Երևան, 1973, էջ 5:

բազմաթիվ նորաբաց թերթեր, հիմնվում են մեծաքանակ դպրոցներ, որտեղ գործադրվում էր աշխարհաբարը՝ չունենալով միասնական կանոններ: Լինում էին փոքր ու մեծ առաջարկներ մտավորականների կողմից (Ղազարոս Աղայան, Նիկողայոս Ադոնց, լեզվաբան Ս. Սարգսյան, Ստեփան Մալխասյանց և այլք)»<sup>1</sup>: Լեզվական և մասնավորապես ուղղագրության հարցերը պետականորեն համակարգող հաստատության բացակայությունը կամայական լուծումների էր մղում մտավորականությանը:

Որպեսզի վերջ տրվի անորոշությանը, պետք էր ստեղծել միասնական ուղղագրություն, որը կսպասարկեր հասարակությանը: Պետք է ասել, որ ուղղագրական փոփոխությունները, ըստ էության, վերաբերեցին արևելահայերենին:

Դեռևս 1913 թվականին հայոց գրերի ստեղծման հազար հինգ հարյուր ամյակի տոնակատարության օրերին Մանուկ Աբեղյանը ներկայացրեց ուղղագրական բարեփոխման իր ծրագիրը, որը իրականացավ միայն 1922 թվականին:

«Բարեփոխման հիմքում, ըստ նախագծի հեղինակի, դրվում է գրական-դպրոցական արտասանությունը: Նոր ուղղագրության համար հիմնական, ելակետային սկզբունք է ընդունվում մեկ հնչյունի (հնչյույթի) համապատասխանությունը մեկ տառին: Այդ պատճառաբանությամբ հայերենի այբուբենից դուրս են մնում Է և Օ տառերը. դրանց փոխարեն գործածվում են միայն Է և Ո նշանագրերը: Մյուս կողմից նոր ուղղագրությամբ փոխվում է գրաբարից ավանդված հայերեն շատ բառերի հնչյունատառային պատկերը, անտեսվում ուղղագրության ստուգաբանական պահանջն ու պատմականությունը: Դրանով խզվում է կապը նաև հին, գրաբարով գրված ու տպագրված և նոր ուղղագրությամբ ստեղծվող գրականության միջև»<sup>2</sup>:

Սփյուռքահայությունը չի ընդունում նոր ուղղագրությունը, ուստի ավելի են խորանում արևելահայ ու արևմտահայ ճյուղավորումների գրության տարբերությունները: Կարող ենք ասել, որ աբեղյանական ուղղագրությունը ոչ թե շտկեց իրավիճակը, այլ հակառակը, խիստ քննադատության ենթարկվեց մտավորականության կողմից: 1940 թվականի օգոստոսի 15-ին Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհուրդը հաստատում է Տերմինաբանական կոմիտեի նախագիծը 1922 թ. նոր ուղղագրությունը մասնակիորեն բարեփոխելու վերաբերյալ: Այդ որոշմամբ հայերենի ուղղագրության մեջ կատարվում են փոփոխություններ:

1940 թվականին կատարված ուղղագրական մասնակի բարեփոխումը թեև չի լուծում գրաբարյան ու նոր ուղղագրության միջև առաջացած

<sup>1</sup> www. wikipedia.org

<sup>2</sup> www. wikipedia.org

սկզբունքային, էական տարբերությունները, բայց, վերացնում է նոր ուղղագրության որոշ թերություններ, վերականգնում է 1922 թվականի ուղղագրական բարեփոխության հետևանքով հայերենի այբուբենից դուրս մնացած տառերը, որոշ հարցերում մոտենում է ավանդական (գրաբարյան) ուղղագրությանը, արտահայտում է արևելահայ գրական լեզվի հնչույթային կազմի արդի վիճակը

Ուղղագրական բարեփոխումները, այնուամենայնիվ, չազդեցին արևմտահայ և իրանահայ գաղութների վրա, ովքեր շարունակեցին և մինչ օրս շարունակում են կիրառել բացառապես ավանդական ուղղագրությունը: ՀՀ անկախացումից հետո՝ ազգային զարթոնքի շրջանում, հայ մտավորականության մի հատված առաջարկեց հրաժարվել արդի արևելահայ ուղղագրությունից՝ կիրառելով միայն ավանդականը: Նրանց սկսեցին պաշտպանել և սատարել նաև որոշ հոգևոր և գիտական գործիչներ:

Վերջին ժամանակներս կրկին քննարկման առարկա է դարձել արևելահայերենի արդի ուղղագրությունից հրաժարվելու և հինի՝ գրաբարյան գրությանը վերադառնալու պահանջը: Նշենք, որ ուղղագրության միասնականացման խնդիրը բարձրացնողները ավելի շատ քաղաքական նպատակներ են հետապնդում, քան լեզվական ճշգրտումների: Պետք է ասել, սակայն, որ եթե հարցի լեզվական քննությունը կարող է ցուցադրել հայերենին բնորոշ ինչ-ինչ իրողություններ, ապա քաղաքական հայեցակետից քննարկումները միասնականացման փոխարեն արհեստական հակադրություն է ստեղծում ուղղագրությունների և անցանկալի լարվածություն՝ բանավիճող կողմերի միջև:

Այս հարցին է նաև անդրադարձել Հովհաննես Բարսեղյանը մի շարք բանավիճային հոդվածներով և «Հայերենի ուղղագրության հարցերը հայագիտության և գրականության դասականների քննությամբ» աշխատությամբ: Լեզվաբանը հայերենի՝ պատմականորեն ձևավորված երկու ուղղագրությունների, նրանց միասնականացման հարցերը քննել է տարբեր տեսանկյուններից՝ փորձելով ներկայացնել համակարգված, փաստարկված ուսումնասիրություն: Նա անդրադարձել է հայերենի ուղղագրության պատմությանը, Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդման հարցերին, նոր ուղղագրության՝ արևելահայ գրականության դասականների տված գնահատականներին, միասնակացման վերաբերյալ վերջին շրջանում եղած բանավեճերի ամփոփմանը և հարակից այլ հարցերի:

Այս աշխատությամբ Բարսեղյանը խստիվ քննադատել է այն անձանց, որոնք ցանկանում են վերադառնալ գրաբարյան ուղղագրությանը:

Պետք է նշենք, որ Բարսեղյանը լիովին ճիշտ դիտարկումներ է կատարում: Նա դեմ է դասական ուղղագրությանն անցմանը, քանի որ

ժողովրդի մի փոքր հատվածն է տիրապետում այդ ուղղագրությանը և ինչպե՞ս ամբողջ ժողովրդին ստիպես, որ սկսի իր համար խորթ ձևով գրել: Տարիների ընթացքում ստեղծվել է բավական հարուստ գրականություն՝ գրված արևելահայ ուղղագրությամբ: Բարսեղյանը չի կարողանում համակերպվել, որ այդ ամենը ներկայացնում են Սփյուռքի և Հայաստանի միավորման անվան տակ: Չէ՞ որ արևմտահայերը և արևելահայերը ունեն իրենց ուրույն հնչյունական համակարգերը (երկշարք-եռաշարք), որը ձևավորվել է պատմականորեն և չի կարող արհեստականորեն փոխվել:

«Դասական ուղղագրության սկզբունքները խախտված են ավելի շատ արևմտահայերենում: Արևմտահայերենը չունի պ, կ, տ, ծ, ճ խուլ հնչյունները և այս գրերով նշանակում է գրաբարի ձայնեղները (գրում է պատ, կարդում է բադ, կատու՝ գադու, պարոն՝ բարոն և այլն): Գրաբարի ձայնեղ հնչյունները ամենուրեք դարձել է շնչեղ խուլ (գարուն՝ քարուն, ծագ՝ ցաք, դուռ՝ թուռ և այլն): Իրենց տեղում են մնացել միայն փ, ք, թ, ց, չ գրերը: Արևմտահայը Գոգոլ գրում, Քոքոլ է կարդում, ուրեմն աղավաղում է անվան հնչումը, Կոկոլ է գրում՝ աղավաղում կամ փոխում է գրությունն ու բառապատկերը»<sup>1</sup>: Բարսեղյանը այսպես ուզում է ցույց տալ, որ դասական ուղղագրության անցնելով՝ չենք լուծի արևելահայերենի և արևմտահայերենի միավորման հարցը: Ըստ Հովհ. Բարսեղյանի՝ վերադարձը դասական ուղղագրության հակապատմական է և հետընթաց: Ահա թե ինչ է գրում նա. «Հարցի պատմության մեջ ճշգրտման կարիք ունի «դասական» տերմինը: Դասական ուղղագրությունը յուրահատուկ էր դասական, այսինքն՝ 5-րդ դարի հայերենին: Միջին հայերենը՝ 11-12-րդ դարերից սկսած, ուներ իր ուղղագրությունը, նոր հայերենը՝ 16-17-րդ դարերից սկսած՝ իրենը, թեև գրաբարի կամ դասականի ավանդական կանոնները շարունակում էին և շարունակում են պահպանվել առայսօր: գործող ուղղագրությունները դասական անվան տակ արտաքին միջամտություններով վերամիավորելու, իսկ ըստ էության՝ նոր ուղղագրությունը հնի փոխարինելու կոչերը հակապատմական, հետընթաց գործողության կոչեր են: 5-րդ դարում գրում էին միասնական՝ ոչ բառանջատ գրությամբ, միայն մեսրոպյան գլխագրերով: 11-րդ դարից հետո այդպիսի ուղղագրություն չկա, և մեր ուղղագրությունը գնալով դառնում է հնչյունական, համալրվում է նոր գրերով, կետադրությամբ, չափական խոսքում՝ վանկի և առոգանության արտահայտման նշաններով: Սկսած Ն. Շնորհալուց՝ բանաստեղծության և

---

<sup>1</sup>Բարսեղյան Հ, Դարձյալ ուղղագրության մասին, «Գիտություն և տեխնիկա», N 10, Երևան, 1996, էջ 41:

երգի մեջ գրաբարի հնչյունափոխված ու-ի փոխարեն ւ են գրում, այսինքն՝ նրագ, լրաւ, զըւարթ, փոխանակ դասական նուագ, լուաւ, զուարթ ձևերի»<sup>1</sup>:

Հին ուղղագրությունը պաշտպանողները պետք է նկատի ունենան նաև այն հանգամանքը, որ ուղղագրությունը ոչ միայն գիտական ու լեզվաբանական երևույթ է, այլև մանկավարժական: Իսկական բռնադատումն այն է, որ նոր լեզվին ուզում են հագցնել նրան անհամապատասխան և հին զգեստները: Հին ուղղագրությունը հին լեզվի համար է, լեզվի հին՝ անցած փուլի համար<sup>2</sup>:

Տույց տալով պատմականորեն տեղի ունեցած հնչյունափոխության հետևանքով բառապատկերների փոփոխությունները՝ նա կարծում է, որ աշխարհաբարը գրաբարի ուղղագրությամբ գրելը խրախուսելի չէ. «Եթե գրաբարի հատանելը աշխարհաբարում դարձել է հատել, գտանելը՝ գտնել, կիզուրը՝ կիզել, ձուկն՝ ձուկ, մեքը՝ մենք, լոյսը՝ լույս, արինը՝ արյուն և այլն, ապա աշխարհաբարը գրաբարի ուղղագրությամբ գրելը և աշխարհաբար արտասանելը, իբրև համակարգ, անհարմար է, այլև անհնար է և վաղուց մերժված»<sup>3</sup>:

Բարսեղյանը ցույց է տալիս, թե ինչպիսի խառնաշփոթություններ են թույլ տալիս այն մարդիկ, որոնք ուզում են անցնել դասական ուղղագրությանը: Օրինակ՝ գրաբարյան ուղղագրության կիրարկման կողմնակից Բաբկեն Չուգասզյանի «Գէորգ դպիր Պալատեցու կեանքի եւ գործունէութեան տարեգրութիւն. 1737-1811» (Երևան, 1994) գրքում նա գտնում է միայն Գևորգ բառի չորս տարբեր ուղղագրություն, այսպես՝ Գէորգ ( էջ 13,101), Գէորք (էջ 124), Գեորգ (էջ 20,101), Գևորգ (էջ 60,114): Այսպիսի օրինակները շատ են այս գրքում, ինչպես՝ Աստուած-Աստուած, հատուած-հատուած, թուական- թակիր և այլն: «Պարզ երևում է,- գրում է Բարսեղյանը,- որ մեծարգո Բ. Չուգասզյանը, որ հին ուղղագրությանն անցնելու ամենաակտիվ քարոզիչներից էր, դասական ուղղագրության անվան տակ ընթերցողին է հրամցնում ուղղագրական շիլաշփոթ»<sup>4</sup>:

«Լեզուն հարատև շարժման ու փոփոխության մեջ է, փոփոխվում է թե՛ քերականական, թե՛ հնչյունային կազմը: Լավ կլինի, որ հնչյունային փոփոխությունները միշտ ունենան իրենց գրային արտահայտությունը, ինչպես

---

<sup>1</sup>.«Գարուն», Միասնական ուղղագրություն, տեսակետներ, բախումներ, լուծումներ, Երևան, 1997, էջ 40:

<sup>2</sup>.www. Aravot.am

<sup>3</sup>.Բարսեղյան Հ, Դարձյալ ուղղագրության մասին, «Գիտություն և տեխնիկա», N 10, Երևան, 1996, էջ 40:

<sup>4</sup>.Բարսեղյան Հ. ,Հայերենի ուղղագրության հարցերը՝ հայագիտության և գրականության դասականների քննությամբ, Երևան, 2004, էջ 42:

եղել է մեր լեզվի պատմության մեջ»,- գրում է Ս. Գյուլբուդադյանը<sup>1</sup>: Սակայն Գյուլբուդադյանը նաև ճիշտ չի համարում առանց սփյուռքահայերի մասնակցության և համաձայնության բարեփոխումների պլան մշակելը, ամեն ինչ ավելի ճիշտ կլիներ, եթե երկկողմանի քննարկումների ճանապարհով կատարվեր բարեփոխումը, որպեսզի երկու հայկական լեզուների համար սահմանվեր մեկ միասնական տառադարձություն: Այդ դեպքում մենք կունենայինք ավելի միասնական հայություն: Այնուամենայնիվ, այսօր ունենք այն, ինչ ունենք: Եվ եթե ուղղագրությունը նորից փոխենք, կստեղծենք խառնաշփոթ իրավիճակ:

Հովհ. Բարսեղյանն անդրադառնում է նաև արևելահայ մտավորականության, գրողների արտահայտած մտքերին՝ փորձելով հակադրվել այն տեսակետին, թե ժամանակին մտավորականությունը բացասաբար է արտահայտվել արեղյանական ուղղագրական բարեփոխումներին: Ներկայացրել և մեջբերել է Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Պ. Սևակի, Հր. Աճառյանի և այլոց կարծիքները և ապացուցել, որ նրանք իրականում կողմ էին Մանուկ Աբեղյանի ուղղագրական բարոփոխումներին: Նա մեջբերում է, օրինակ, Հր. Աճառյանի հետևյալ տեսակետը. «Երբ գրվածքի և նրա հնչման մեջ եղած տարբերությունը շատ խոշոր չէ, տանելի է, իսկ երբ նրանք շատ մեծ չափերի են հասնում, պատճառ են դառնում մեծամեծ դժվարությունների: Մարդիկ պարտավոր են իրենց լեզվի հետ սովորել նաև հին գրությունը, հակառակ պարագային ենթակա են բազմաթիվ ուղղագրական սխալների, իմաստի թյուրիմացության և այլն: Պահպանողական ժողովուրդները տանում են այս բոլոր դժվարությունները, ճիշտ այնպես, ինչպես ֆեոդալական երկրում ճորտը տանում էր ազնվականների բռնակալությունը: Բայց երբ մարդիկ դառնում են ազատախոհ, սկսում են մտածել, թե հանուն ինչի՞ է այդ դժվարությունը, պահանջում են գրել այնպես, ինչպես հնչում են: Ուղղագրական բարեփոխությունը օրվա հարց է դառնում»<sup>2</sup>:

Ինչպես գրում է Պարույր Սևակը. «Նորի դեմ կռվելը վատթարագույն դոկկիֆտոտություն է, նորի առաջ աչք փակելը՝ ջայլամային հիմարություն»: Այս խոսքերից հետո Բարսեղյանը վերջացնում է իր աշխատությունը, ընդամենը մեկ հարց ուղղելով ընթերցողին՝ «Այս ամենից հետո ինքներդ որոշեք, թե մեծանուն Պարույր Սևակի՞ ըստ հնչման գործածած

<sup>1</sup> Գյուլբուդադյան Ս., Հայերենի ուղղագրության պատմություն, Երևան, 1973, էջ 290:

<sup>2</sup> Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ.6, Երևան, 1971, էջ 86:

«հիմարությունն» է ճիշտ, թե հակաճառողների՝ ըստ գրաբարի գրության գործածած «յիմարիութիւնը»<sup>1</sup>:

Արևմտահայերենի և արևելահայերենի միավորման և ուղղագրության միասնականացման հարցը մեծ քննարկումների առարկա է դարձել, և մինչև օրս էլ դեռ կան հայագետներ, որոնք երկու լեզուների միավորմանը ուզում են հասնել արհեստական փոփոխությունների ճանապարհով: Հովհաննես Բարսեղյանն իր «Գրական հայերենի միավորման հարցը և նրա քննությունը Հրաչյա Աճառյանի աշխատություններում» հոդվածում անդրադարձել է երկու հայերեն տարբերակների միավորման խնդրին ևս: Հոդվածում քննվում են Հր. Աճառյանի լեզվաբանական հայացքները՝ կապված հայերիս միալեզվության խնդիրների հետ: Հեղինակը ներկայացրել է նաև Հ. Մանանդյանի, Մ. Նալբանդյանի, Մ. Աբեղյանի, Գ. Սևակի, Գ. Զահուկյանի տեսակետները: Հոդվածում շեշտվում է այն հանգամանքը, որ Աճառյանի աշխատություններում 5-րդ դարի հայերենը դիտում են հնդեվրոպական նախալեզվից առաջացած մեկ միասնական լեզու, որը հետագա դարերում պատմական հանգամանքների բերումով փոխվել է: Հայերենը 19-րդ դարում արդեն բաժանված էր երկու տարբերակների՝ արևելահայերենի և արևմտահայերենի: Հոդվածում այն խնդիրն է դրված, թե արդյո՞ք հնարավոր է գրական հայերենի միավորումը: Ինչպես իր գրքույկում Բարսեղյանը դեմ է արհեստական ուղղագրական փոփոխություններով երկու հայերենների միավորմանը հասնելուն, այնպես էլ այս հոդվածում նա համաձայնում է Աճառյանի և Թումանյանի այն տեսակետին, թե «որտեղ հայրենիք և ժողովուրդ, այնտեղ էլ ազատ ու միասնական ազգային լեզու, հետևաբար լեզվի միասնությունը Հայաստանում և հայ ժողովրդի մեջ պիտի որոնել և ոչ այլուր»<sup>2</sup>: Լեզվաբանը նոր գրական հայերենի երկու ճյուղերի միավորման հարցը դիտարկում է բավականին լայն հարցադրումների համատեքստում՝ կարևորելով սփյուռքի ներկայացուցիչների հետ միասնական և համաձայնեցված աշխատանքի անհրաժեշտությունը. «Եթե մենք կարողանանք ներքին և արտաքին սփյուռքի ներկայացուցիչների հետ պարբերական հանդիպումներ ունենալ, մշակել տառադարձության ըստ հնարավորին մոտ սկզբունքներ, որոշենք տերմինաբանության և բառագործածության քիչ թե շատ ընդհանուր նորմաներ, իրականացնենք ուղղագրական, կետադրական և ուղղախոսական ընդհանուր միջոցառումներ,

---

<sup>1</sup> Բարսեղյան Հ., Հայերենի ուղղագրության հարցերը՝ հայագիտության և գրականության դասականների քննությամբ, էջ 96-97:

<sup>2</sup> Տե՛ս Բարսեղյան Հ., Գրական հայերենի միավորման հարցը և նրա քննությունը Հրաչյա Աճառյանի աշխատություններում, «Բանբեր Երևանի համալսարանի», 2 (89), Երևան, 1996, էջ 102:



ընդհանրապես քայլ առ քայլ իրար ընդառաջ գնանք այն բոլոր հարցերում, որոնց մեջ կարելի է ընդառաջ գնալ, այդ կլինի շատ օգտակար, քան արևելահայ ուղղագրության միակողմանի և հապճեպ փոփոխությունը»:<sup>1</sup> Գիտնականի կարծիքով՝ ուղղագրական, լեզվական ամեն մի փոփոխություն պետք է լրջորեն քննարկել, կանխատեսել հետևանքները, այլապես գրական լեզվի գործառության և ուսուցման համար կարող են անհաղթահարելի դժվարություններ առաջանալ<sup>2</sup>: Հովհ. Բարսեղյանը կարևորում է նաև այն հանգամանքը, որ արևելահայությունը ուղղագրության անմտածված և հապճեպ փոփոխության հետևանքով մի օրում կարող է դառնալ պարզապես անգրագետ, միաժամանակ արևելահայ ուղղագրությամբ հրապարակված գիտական, գեղարվեստական ամբողջ գրականությունը կդառնա անընկալելի:

Այսպիսով, Բարսեղյանի գործերը ուսումնասիրելով՝ հասկանում ենք, որ մեր լեզվի միասնականացմանը կարող ենք հասնել ոչ թե արհեստական փոփոխությունների միջոցով, այլ երկուստեք փոխզիջումների ու քննարկումների ճանապարհով: Եթե նույնիսկ մի օր անցում կատարենք դասական ուղղագրությանը, դա չպետք է լինի պարտադրված, այլ բնական: Միաժամանակ դժվար է հասնել միասնության միայն ուղղագրությունը փոխելով, քանի որ փաստացի գոյություն ունեն երկու տարբեր լեզվատրականներ:

Ամփոփելով ասվածը՝ կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

1. Հարցն ընդհանրապես պետք է հանել քաղաքական շահարկումների ոլորտից և քննել միայն լեզվական հարթությունում՝ հայերենի զարգացման օրինաչափությունների, ուղղագրական փոփոխությունների նպատակահարմարության հաշվառմամբ:

2. Պետք է լրջորեն զբաղվել արևմտահայերենի ուսումնասիրությամբ, մասնավորապես ուղղագրության միասնականացման ուղղությամբ:

3. Չմոռանանք, որ արևմտահայ ուղղագրությամբ ևս հսկայածավալ գրականություն է ստեղծվել, որի ընթերցումն ու յուրացումը արևելահայի համար ևս դժվարություններ է ներկայացնում այնպես, ինչպես արևմտահայի համար արևելահայ գրականությունը: Այստեղից հետևում է, որ ուզենք-չուզենք, գործ ունենք զուգահեռ գոյություն ունեցող հայերեն երկու ուղղագրության հետ, որոնցով ստեղծվել և ստեղծվում է հարուստ գրականություն, էլ չենք խոսում գրաբարի մասին: Կարծում ենք՝ ճիշտ կլինի, հարցի լուծումն սկսել դպրոցից. պարտադիր առարկայացանկում ներառել արևմտահայերենը և գրաբարը, լեզվական գիտելիքներին զուգահեռ

---

<sup>1</sup> Բարսեղյան Հ., Դարձյալ ուղղագրության մասին, «Գիտություն և տեխնիկա», N 10, Երևան, 1996, էջ 42:

<sup>2</sup> Տե՛ս Բարսեղյան Հ., Ուղղագրությունը գիտություն է, «Ազգ», 1997, էջ 4:

սովորեցնել ուղղագրությունը: Չէ՞ որ հայերենին զուգահեռ հայ աշակերտները սովորում են բազմաթիվ այլ լեզուներ ու դրանց գրությունը...

*Բանալի բաներ՝ արևմտահայերեն, ուղղագրություն, բանավեճ, ուղղագրության միասնականացում, սիյուռք, այբուբեն, գրաբար:*

## HOVHANNES BARSEGHYAN AND THE ISSUES OF ARMENIAN ORTHOGRAPHY

**ASOYAN TATUL**

Candidate of Philology, Associate Professor,  
Dean of the Faculty of Philology

**NERSISYAN LILIT**

2nd year MA student at the  
Department of Armenian Language and Literature

Since the 90s of the 20th century, the issue of combining the spelling of the Armenian language was revived among the Armenian intellectuals. They suggested replacing Eastern Armenian spelling with that of Grabar, believing that this would contribute to strengthening ties between the Motherland and the Diaspora. Linguist Hovh. Barseghyan also participated in these debates and in a number of speeches and articles he excluded the possibility of spelling unification.

**Key words:** *Western Armenian, orthography, debate, unification of orthography, Diaspora, alphabet, Grabar.*

## ОВАНЕС БАРСЕГЯН И ВОПРОСЫ АРМЯНСКОЙ ОРФОГРАФИИ

**АСОЯН ТАТУЛ**

Кандидат филологических наук, доцент  
декан филологического факультета

**НЕРСИСЯН ЛИЛИТ**

Студентка 2-ого курса филологического факультета, отделения  
«Армянский язык и литература» ГГУ

Начиная с 90-х годов 20-го века в среде армянской интеллигенции поднимается вопрос объединения правописания армянского

языка. Предлагали заменить восточно-армянское правописание правописанием грабара, полагая, что это будет способствовать укреплению связей между Родиной и Диаспорой. Языковед Ов. Барсемян также участвует в этих дебатах и в ряде выступлений и статей исключает возможность такого объединения.

**Ключевые слова:** *западноармянский язык, орфография, дебаты, объединение орфографий, диаспора, алфавит, грабар.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 16.03.2019թ.:  
Հոդվածը գրախոսվել է 12.04.2019թ.: